



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

09 ՀՈՒԼԻՍԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Քաջիկ Գասպարյանը, Արտակ Գևորգյանը, Էմիլ Սարգսյանը, Գեղամ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը, առաջին կարգի մասնագետ Նաիրա Ստեփանյանը, «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Սիլվա Հակոբյանը, հաշվապահ Եղիշե Նազարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ 6 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 6 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձորի համայնքապետարանի հաշվեկշռում առկա խողովակներից օգտագործելու համար թույլտվություն տալու և Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարվող փոփոխությունները հաստատելու մասին:

3. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 10-ի թիվ 55-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին:

4. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:

5. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3.44778 հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

6. Գլաձոր համայնքի սեփականություն հանդիսացող որոշ հողերի գործառնական նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

7. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.03 հա այլ հողատեսքը մրցույթով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

8. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.0402 հա բնակելի կառուցապատման հողն աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:

9. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող բարդու ճյուղերը հատելու համար թույլտվություն տալու մասին:

10. 2021 թվականին Գլաձոր համայնքի կողմից վարձատրվող հասարակական աշխատանքներով կատարված ծրագրերում «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տրամադրության տակ գտնվող տեխնիկաներով իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացման մասին:

11. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական հատկացումներ կատարելու մասին:

12. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

13. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի մշակույթի տան սենյակներից անհատույց օգտագործման տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

14. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 46-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ-7	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/